



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՌԻՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԶՄԻՌՆԻԱ ՇԱԲԱԹ 21 ՅՈՒՆՎԱՐ 1878 1084

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Յայտնի է թէ զինուց բաղձն յաջողակ չհան- ղիսացաւ թուրքիոյ . բայց և այնպէս Ռուսիան այնպիսի շանթահար յաղթութիւն մի չտարաւ . որ զհակառակորդն կործանելով՝ յաղթողին կամաց ներքև կըթողու զնա . Օսմանեան զօրա- բանակն մեծ արիութեամբ պատերազմեցաւ և զիւցազնական քաջագործութեանց ապացոյց- ներ տուաւ արիասիրտ և անվեհեր զօրավարաց ներքև . Եթէ այսչափ քաջութեան օգնական եղած լինէր զինուորական աւելի հմուտութիւն և աւելի միութիւն՝ ի ծայրագոյն հրամանատարու- թեան , հաւանականաբար արդիւնքն յոյժ տար- բեր պիտի լինէին այժմ :

Զխարդեկիցէ , այսօրուան օրս Օսմանցւոց կա- ցութիւնն՝ առանց յուսահատական լինելոյ , թոյլ չտայր նոցա ուրիշ բանի սպասել բայց մի- այն պատուաւոր հաշտութեան մի : Երկու տե- սութեամբ կրնայ նկատուիլ ապագայ հաշտու- թեան դաշնագոյն խմբագրութիւնն . այսինքն եւրոպական տեսութեամբ կամ մասնաւոր տե- սութեամբ , որ յատկացեալ պիտի լինի պատե- րազնոյ երկուց տէրութեանց : Աւելի ճշդիւ խօսելով , պարտ էինք տեսլ թէ Ռուսիան և թուրքիան կրնան հաշտութիւն մի կնքել յար- դելով ըստ օրինի զընդհանուր օգուտն եւրո- պիոյ , կամ այնպիսի հաշտութիւն մի ընել՝ որ առանց մեծ հոգ տանելոյ այս ընդհանուր օգ- սից վերայ , ապահովէ զեւրոպական օգուտն իւրեանց : Մեծ տէրութեանց քաղաքական ըն- թացքն իրաւունք և արածութիւն տուաւ թուր- քիոյ և Ռուսիոյ որ ըստ կամաց իւրեանց վար- ուին այս պարագայիս մէջ :

Գաղղիական «էնթարսիալ» օրագիրն Զմիւռ- նոյ , յորմէ թարգմանեցինք զնախընթաց յօդ- ուածն , այսպէս կը յաւելու . Տէրութիւնք շատ անգամ յառաջ բերին ՚ի նպատ իւրեանց զդաշնագիրն փարիզի՝ որ կըն-

քեցաւ Մարտի 30ին 1856 . բայց բոլորովին կը- մուռնան նոյն տարւոյն Ապրիլի 13ին դաշնագիրն որ ստորագրեցաւ ՚ի մէջ Վէննայի , փարիզի և Լոնտօնի դաշնաց : Այս կարեւոր գրուածոյն վերնագիրն կատարելապէս կը յայտնէ զընու- թիւն նորին . վասնզի «Դաշնագիր երաշխաւոր- ութեան» կը կոչուի և իւր յառաջաբանն հե- սակեալ կերպիւ կըսկսի .

«Վեհափառ կայսրն Գաղղիացւոց , վեհափառ կայսրն Աստրիոյ և վեհա . թագուհին Միացեալ թագաւորութեան Մեծին—Բրիտանիոյ և իր- լանտայի , կամելով կարգադրել ՚ի մէջ իւրեանց զմիտքան շարժումն զոր պարտաւորեալ են ՚ի գործ դնել եթէ տեղի ունենայ որ և է օրինա- զանցութիւն պայմանաց փարիզի հաշտութեան , համաձայնեցան ՚ի վերայ յետագայ յօդուածոց : Նախ՝ դաշնագիր մեծ տէրութիւնքն համերաշ- խութեամբ ՚ի մէջ իւրեանց՝ կապահովեն զան- կախութիւն և զանբողջութիւն օսմանեան կայ- սերութեան որ նուիրագործեալ են փարիզի դաշնագրութեամբ . որեւէ օրինազանցութիւն պայմանաց նոյն դաշնագրոյն՝ պիտի նկատուի ՚ի տէրութեանց ստորագրողաց ներկայ դաշնա- գրոյս իբրև պատճառ պատերազմի (casus belli) : Վասնորոյ պիտի համաձայնին Բարձրագոյն Դրան հետ ՚ի վերայ ձեռնարկելի միջոցաց հարկաւոր եղելոց , և անյայտ պիտի որոշեն ՚ի մէջ իւր- եանց զգործածութիւնն զինուորական և նաւա- կան զօրութեանց իւրեանց» :

Այս դաշնագրոյն պարունակութեան կը տես- նուի թէ դիպուածական օրինազանցութիւն մի 1856 Մարտի 30 դաշնագրոյն՝ կը պարտաւորէ զերիս երաշխաւոր տէրութիւնս պաշտպանել զթուրքիան : Յիշեալ դաշնագիրն՝ ինչպէս յայտ- նի է , բռնաբարեցաւ իւր ամենահարկաւոր պայմանացը մէջ , այսինքն այն պայմանաց մէջ , որք զթուրքիան կապահովցեն յարտաքին յարձակմանէ միոյ : Ռուսի պատերազմի հրատա- րակութիւնն Ռուսիոյ ընդդէմ Բարձրա Դրան մին է ՚ի դիպաց , որոց կանխաւ ակնարկութիւն

կընէ դաշնագիրն , ուստի մեծ տէրութեանց միջամտութիւնն պարտ էր ՚ի գործ դրուիլ : Սա- կայն մեծ տէրութիւնքն թող տուին որ պատե- րազմն հրատարակուի , ուստի նորա ձախարդ- հետեանքն եթէ զնատակար լինին օգտից իւր- եանց , յանցանքն անշուշտ նոյն իսկ յիշեալ տէ- րութեանց կը վերաբերի , որք չկամեցան հաս- տատուն պահել զգրաւոր խոստմունս իւրեանց :

Բարձրագոյն Դրան և Ռուսիոյ կառավարու- թեան մէջ տեղի ունեցած բանախօսութիւնքն կը շարունակեն ՚ի մասին փոխադարձ պատուա- ւոր հնչողութեան մի ՚ի մէջ յիշեալ տէրութեց : Այս բանախօսութեանց յաջող վախճանին վե- րայ մեր յոյսն հոստատուն է , զոր կը վերահաս- տատէ ՚ի Լոնտօնէ ամսոյս 14—26էն արձակեալ հեռագիր մի , ծանուցանելով թէ լրտա Պի.քընս- ֆիլտ յայտնեւ է բարձրագոյնքն մէջ , թէ Ռու- սիոյ առաջարկեալ պայմանքն հաշտութեան՝ կրնան զինագաղարման մի հիմն պատրաստել :

—Ի փարիզէ ամսոյս 15—27էն յուղարկեալ ուրիշ հեռագիր մի կը ծանուցանէ թէ Գաղղիոյ Միջերկրական նաւատորմը մէկ բաժինն հրա- ման ընկալաւ պատրաստուիլ ճամբայ ելլելու յարևելեան ծովն երթալու համար :

—Բէյրութիւն կը գրեն թէ յիշեալ մայ- րաքաղաքին մէջ ընդհանուր հակամիտութիւն մի կը տեսնուի առ ՚ի միաբանել զօգուտն Ռու- սիոյ ընդ Ք.գտից Եւրոպիոյ մեծ տէրութեանց՝ երաշխաւոր եղելոց ամբողջութեան և անկա- խութեանն թուրքիոյ :

—Դարձեալ Պէրլինի և Բէյրութիւնի պաշ- տօնական օրագիրքն կապահովցեն զԵւրոպա- կան մեծ տէրութիւնսն՝ թէ Ռուսիոյ պահանջ- մունքն վասն հաշտութեան՝ յոյժ չափաւոր են :

Հեռագիրն կընէ թէ՛ նախարարք Լոնտօնի ի- մաց տուին բարձրագոյնքն թէ եւրոպական ծանրակշիռ միութիւն մի պիտի յայտնեն , բայց ցարգ կարելի չեղաւ ճոքա գործագրութիւնն՝ Աւստրիան չուզելով մասնակից լինիլ :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՍՆԴԻՍ ԲԱՑՄԱՆ(1)

Մարիամեան—Յովնանեան դպրոցին օրիորդաց Հայոց ՚ի Տիսիսի :

Արարատ ամսագրոյ ընթերցողաց արդէն յայտ- նի էր Մարիամեան—Յովնանեան դպրոցին նպա- տակը և հաստատութիւնը . այժմ կատարեցաւ նաև հանդիսաւոր բացուիլը՝ որ եղաւ ամսոյս 8ին : Նոյն ուրախարար լուրն տարածեցին հա- մառօտիւ նաև Տիսիսիստ լրագրերն : Եւ որով- հետև այսպիսի ազգօգուտ հիմնարկութիւնք արժանի են ընդհանուր ազգայնոց մտադրու- թեանը , աւելորդ չեմք համարել փոքր ինչ ըն- դարձակօրէն նկարագրել այս բացման հանդէսը :

Օղջ պարզ էր և գեղեցիկ , և կարծես թէ կա- ւետաւորէր ազգիս Հայոց , մանաւանդ որք և չքաւոր զաւակաց նորին , այս նոր բուրաստանին բացուիլը՝ ազգիս բարոյական և ուսումնական յառաջադիմութեան նոր դարուն գուշակելով :

Օրերով առաջ դպրոցին խորհրդարանը զբա- ղեցաւ աշակերտահեաց ընտրութեան , մանա- ւանդ ձրիավարժից՝ որք կասուին «Յովնանեան

(1) Արշալուստյ Ղեկ. 24 բուով արդէն ծանուցեալ էր զբացումն այս նորահաստատ դպրոցին . որոյ մե- ծաշուք հանդիսին զնկարագրութիւնն քաղեմք այսօր ՚ի Նոյնն . ամսագրին Արարատայ՝ յուրախութիւն ընդ- հանուր ազգիս Հայոց եւ ՚ի պարձան մեծանուն Յով- նանեան զեղատաանին որ ՚ի Մոսկուա :

անք» և որոց թիւը սահմանեալ է առայժմ 60 : Այս դասակարգութեան առաջարկուած օրիոր- դաց թիւը արդէն երկու հարիւրէն աւելի էր՝ թէպէտ խորհրդարանն հարկագրուած էր իւր սահմանած թիւէն աւելի ձրիավարժ տղակեր- տուհիք չընդունել , բայց ուրախութեամբ ըն- դունեցաւ քսանի չափ այնպիսի որք և աղքատ օրիորդներ ևս , որոց համար բարեբար տիկնայք և պարոնայք ոմանք յանձնառու եղեր էին ինք- նայօժար կամք մայրագիր և հայրագիր լինել նոցա , և տարեկան թոշակը վճարել , որ է 24 ռուբլի ուսման և 3 ռուբլի ուսումնական պիտո- յից համար , և են սոքա :

- 1 Տիկին Վարդուհի Գաթեան Յովնանեանց 3
  - 2 Սողոմէ Յովնանեան Յովնանեանց 4
  - 3 Մարիամ Դահրամանեան Գուշարեան 3
  - 4 Վառվառէ Վասիլեան Թամամչեանց 1
  - 5 Կատարինէ Միքայէլեան 1
  - 6 Յուլիանէ Գէորգեան Թահիրեանց 2
  - 7 Նունէ Չաքարեան Աբիսողոմեանց 1
  - 8 Վառվառէ Յովն.Մելիք Հայկազեանց 1
  - 9 Տիրուհի Աղէ.քսանդրեան Մանթաշ 2
  - 10 Իշխանուհի Եւգինէ Բէհրուտեանց 1
  - 11 Բժշկապետ Յարութիւն Յովնանիսեանց 1
  - 12 Մկրտիչ Մարգսեան Սանասարեանց 1
  - 13 Թիլիզի կարապետ Մելիք—Բեկլարեանց 1
- Աշակերտահեաց միաձև հանդերձն է մութ կարմրագոյն պարեգօտ և սևագոյն գոգնոց . այս հանդերձները պատրաստուեցան դպրոցին ծախքով :

Նորամուտ աշակերտահեաց հասակը սահման- ուած է 8 տարեկանէն մինչև 13 , և դասարանք 4 են (2 փոքր նախակրթարան , մի մեծ նախա- կրթարան և մի առաջին դասարան) :

Հանդիսին նախընթաց օրը տոմսակներով հրա- ւիրուեցան հարիւրէն աւելի պատուաւոր ան- ձինք քաղաքիս , ինչպէս նաև բոլոր ազգային ուսումնարանաց տեսուչներն և ուսուցիչները և միայն տեղոյն անձկութիւնը պատճառ եղած էր աւելի բազմաթիւ հրաւիրականներ չլինելուն :

Ինչպէս որ կանխաւ որոշուած էր , ժամը 10ին գերա. Գարրիէլ արքեպիսկոպոս Առաջնորդը մատոյց սուրբ պատարագը կուսանաց Անապատի սուրբ Ստեփաննոս եկեղեցոյն մէջ , և պատու- րագին սպասաւորեցին պարկեշտատուն կուսան- քըն ըստ վաղեմի սովորութեան՝ սարկաւազու- թեամբ և դպրութեամբ : Երբ սուրբ պատարա- գը վերջանալով՝ գերա. ժամարարը բեմէն վայր իջաւ , քաղաքիս եկեղեցեաց աւագերէցք և այլ ևս քահանայք շուրջաւառք սկսան երգել «Էմիմաժին ՚ի հօրէ» շարականը . այն միջոցին բեմե ելաւ շուրջաւազեոտ քահանայն կուսա- նաց Անապատի , և կարգաց ի լուր ամենեցուն վեհափառ կաթողիկոսին Հայրապետական կոն- դակը , յորում վեհափառը ծանուցանելով Մա- րիամեան Յովնանեան դպրոցին բացումը , օրհ- նելով բարեբար հիմնադիրները , այսինքն զհան- դուցեալ Մարիամ Յովնանեանեան Յովնանեանց մաղթելով նմա հանգիստ յաւերժական , և ըզ- Յովնանէս Ստեփանեան Յովնանեանց՝ մաղթե-

# Ա Չ Գ Ա Յ Ի Ն

ՄԱՍԻՍ լրագրոյն ամսոյս 10 թուոյն մէջ զհե-  
տեեալ ազգային կարևոր տողսն ընթեռնուածք,  
որք անշուշտ ծանր ուշադրութեան արժանի են:

Մայրաքաղաքիս ազգային լրագրերէն ոմանք  
Ս. Պատրիարք Հօր անցեալ շաբթու խառն ժո-  
ղովոյ ներկայած մէկ գրաւոր առաջարկութեան  
վրայ կըխօսին՝ առանց ստոյգ կամ հիմնաւոր  
տեղեկութեան: Անոնցմէ մին ալ՝ ի լրոյ իմացա-  
ծին վրայ հիմնելով՝ անպատեհ և վնասակար կը  
դասէ զայն:

Մեք մեր սովորութեան համեմատ՝ գործն  
ստուգելով՝ ոչ թէ անպատեհ և վնասակար,  
այլ ընդհակառակն՝ մեծապէս օգտակար կը-  
ղանենք թէ Ազգին և թէ Տէրութեան:

Ս. Պատրիարքն՝ Հայաստանի մէկ կարևոր մու-  
սին տրդէն Ռուսաց ձեռքն անցած և մէկ մեծ  
մասին ալ գրաւման վտանգի մէջ ըլլալն և առ-  
կից թէ տէրութեան և թէ Հայոց ազգին կրե-  
լիք բարոյական և քաղաքական վնասները նկա-  
տելով, իբրև հաւատարիմ և անձնուէր հպա-  
տակ Օսմանեան պետութեան և իբրև չերմ  
նախանձախնդիր Հայոց ազգին տպագայ բար-  
դաւաճման և եկեղեցւոյ անկախութեան,  
հարկ համարած է խնդրել կայսերական կառա-  
ւարութենէն Հայաստանի համար վարչական  
այնպիսի ձև մը, որով կարելի ըլլայ յիշեալ եր-  
կիրը պահպանել ներքին և արտաքին թշնամ-  
եաց յարձակումներէ:

Նորին Սրբազնութիւնը դիտել կուտայ իւր  
առաջարկութեան ծրագրին մէջ թէ՛ երբ Օս-  
մանեան տէրութեան միւս քրիստոնեայ հպա-  
տակներէն ոմանք իրենց ազգայն բարեւոքե-  
լու գիտաւորութեամբ կապտամբէին, Հայոց  
ազգն՝ ինչպէս որ պարտքն էր՝ նախամեծար հա-  
մարելով միշտ հաւատարիմ մնալ առ զահն Օս-  
մանեան, բնաւ ակնալ կախած չէ օտար թեւա-  
գրութեանց: Ընդհակառակն՝ թուրքիոյ միւս  
ազգաց վիճակին բարեւոքման համար ըլլալիք  
չնորհումներուն անոնցմէ առաւել արժանի ըլ-  
լալը քաջ դիտնալով, իւր օգոստ. Վ. հնապետին  
արդարախոհութեանը վրայ վստահ՝ հանդարտ  
լուծութեամբ ամեն շնորհ Նորին Վ. հնապետու-  
թենէն սպասած է և միշտ կըսպասէ:

Հետեալքար մինչդեռ ապստամբութեան դի-  
մող հպատակ ժողովուրդներն անկախ ինքնօրի-  
նութիւններ և առանձնաշնորհութիւններ ձեռք  
կըրերեն, Հայոց ազգին բազմադարեան անյեղ-

լի հաւատարմութիւնն ու հնազանդութիւնն  
անվարձ թողուլ՝ կայսերական կառավարութեան  
ծանուցեալ արդարախոհութեան ու վեհանձնու-  
թեանը հետ չկրնար համաձայնիլ, ինչպէս որ օ-  
գոստափառ Սուլթանն ալ՝ Ս. Պատրիարքն իւր  
ներկայութեան ընդունելուն առթիւ յայտա-  
բարած էր թէ՛ Հայոց ազգին դարաւոր հաւա-  
տարմութիւնն ու անձնուէր ծառայութիւններն  
անվարձ չպիտի մնան:

Ահա սոյն նկատողութեանց վրայ հիմնեալ է  
Ս. Պատրիարք Հօր պատրաստած առաջարկու-  
թեան ծրագիրը. նկատողութիւնք, որք ար-  
դարութեան սկզբանց համաձայն ըլլալէ զատ՝  
միանգամայն ազգին և տէրութեան ստոյգ շա-  
հերը կէտ նպատակի ունին:

Չմիւռնա, 18 Յունվար 1878

Յարգոյ խմբագիր Արշալուսոյ,

Պ. Մ. Մամուրեան գերա. խորէն Արքեպիսկո-  
պոս Նար—Պէյի դասագրեանց առթիւ՝ քննա-  
դատութեան սկզբունքը խիստ օգտակար և օ-  
րինաւոր կըդասէր, առանց յիշելու սակայն  
գաղղիական առածը՝ որ կըսէ La critique est fa-  
cile, l'art est difficile. ուստի իր այս սկզբանց հե-  
տեւելով՝ կուզենք մենք ալ քանի մը դիտողու-  
թիւններ ընել՝ իրեն «Համառօտ դասագիրք  
ընդհանուր պատմութեան» անուանեալ երկա-  
սիրութեանը վրայ, որու մէջ գտնուած ինչ ինչ  
պատմական սխալները կրնայ ըսուիլ թէ դիտ-  
մամբ եղած են քան թէ անուշադրութեամբ:  
Սոյն երկասիրութեան մէջ (երես 10) Պ. Մամուր-  
եան՝ աշտարակաշինութեան վրայ խօսելով այս-  
պէս կըսէ. . . «Մարդիկ երթալով այնչափ շատ-  
ցան որ իրենց բնակած երկրին մէջ ուտելու բա-  
ւական սնունդ չգտան և ոչ արօտներ իրենց  
խաչանց համար. սակայն իրարմէ բաժնուելէն  
առաջ՝ ուղեցին աշտարակ մը շինել որու դա-  
դաթը մինչև երկինք պիտի հասնէր՝ իբրև յի-  
շատակ իրենց բաժանման և Կերթն Գրիստի»:  
Ս. Գիրքը՝ որ ընդհանուր քրիստոնէից ընդու-  
նած սրբազան պատմութեան միակ աղբիւրն է,  
աշտարակաշինութեան նպատակը բողոքովն Պ.  
Մամուրեանի գրածէն տարբեր կերպիւ կընշա-  
նակէ, այսինքն «աշտարակաշինութիւնը այն  
նպատակաւ եղած էր որ, եթէ երկրորդ ան-  
գամ շրջեցնէ լինի, մարդիկ հոն ապաստանե-  
լով սոյն պատճէն ազատին. բայց Աստուած ա-  
նոնց այս ամբարտաւան գործը պատճելու հա-  
մար լեզունին խառնակեց և այլն»:  
Չենք կրնար

Եկեղեցականք հանդերձ բազմութեամբ ժո-  
ղովրդականաց ելան դպրոցին վերնայտրիի դա-  
լիճը, որ զարդարուած էր կենդանագրովը Կայ-  
սեր և կայսրուհւոյ, թագաժառանգ Մեծ Իշ-  
խանին և նորա ամուսնոյն, կովկասեան Փոլսար-  
քային և նորա ամուսնոյն, և հանդէպ նոցա մեր  
վեհա. կաթողիկոսին մեծագիր կենդանագիրը  
պատկերներովը, նմանապէս Յովհաննու Յով-  
նանեանց ու նորա հանդուցեալ ամուսնոյն պատ-  
կերներովը, այլև վեհա. կաթողիկոսին դեղեցիկ  
շրջանակի մէջ գրուած դեղեցիկազիր և շքեղա-  
զարդ կոնդակովը: Երբոր դահլիճը լցուեցաւ  
հանդիսականներով և աշակերտուհիներով, կա-  
տարուեցաւ դպրոցին օրհնութեան հանդէսը:  
Ս. Առաջնորդը յետ պահպանիչ ասելոյն՝ հետա-  
գայ ճառախօսութեամբ՝ աւետարտեց Մարի-  
ամեան—Յովնանեան դպրոցին բացումը:

«Քրիստոսասէր մեծարգոյ հանդիսականք.  
«Այսպէս ահա առ Աստուած աղօթքներով,  
սրտառուչ մաղթանքներով, վեհա. կաթողիկոսի  
Հայրապետական օրհնութեամբ և օգոստափառ  
կայսեր հաստատութեամբ կըբացուի այս վայր-  
կենէս Մարիամեան—Յովնանեան դպրոցս օրիոր-  
դաց Հայոց: Որքան ուրախարար հանդէս է այս  
ճշմարտապէս ազգասէր և բարեսէր անձանց,  
մանաւանդ նոցա, որ քաջ դիտեն մեր ազգին  
այս տեսակ հիմնական կրթութեան և դաստիա-  
րակութեան ունեցած ամենամեծ կարօտութիւ-  
նը: Փնաք և պարծանք Յովնանեան ազնիւ  
ազգաստոյնին այսպիսի յաւերժական յիշատա-  
կով պատիւ բերող բարերար հիմնադրաց, այս-

ըսել որ Պ. Մամուրեան Ս. Գրոց հանրածանօթ  
պատմութեան անգէտ եղած ըլլայ. հետեալքար  
աշտարակաշինութեան նպատակը իբրև Գրիստի  
Կերթն ընդունելովը նորամուտ վարդապետու-  
թիւն մը քարոզած, և Ս. Գիրքը սրբազարեալ  
աւսարիշտ գրութեան մէջ ինկած է: Պ. Մա-  
մուրեան դարձեալ յիշեալ իր երկասիրութեան  
մէջ (երես 24) օրինաց վրայ խօսելով՝ երեք մասի  
կըբաժնէ զանոնք՝ այսպէս, բնական, երկնային և  
ընթերցան. բայց ետքը մէկ մը ևս կ'աւելցնէ կրօ-  
նական անուանելով զայն: Թէև բնական ու ըն-  
կերական օրինաց վրայ քանի մը քմածին բա-  
ցատրութիւններ կըտայ, սակայն երկնային անուա-  
նած օրէնքը պարագայ կըթողու, և Հասկըցներ  
թէ՛ նորուս աշակերտ մը ինչ պիտի խմանայ  
երկնային օրէնք կոչելով: Պ. Մամուրեան «մի  
ըներ ուրիշին ինչ որ չես կամիր որ քեզի ընեն»,  
Ս. Աւետարանին խօսքը՝ Տանաքանեայ պատուի-  
հասակակիցներուն մասամբ իւր իմանայի կրնայ  
ըլլալ, բայց նորուս աշակերտաց համար բաւա-  
կանացուցիչ չէ. ապա ուրեմն իր դասագրքին  
մէջ պէտք էր տանաքանեայ պատուիրանքը  
մի առ մի նշանակել յօգուտ ուսանողաց:

Դարձեալ (երես 100) Աստուածաշունչի «Երգ  
Երգոց» գրքին վրայ խօսելով «Տօլուալեան սիրոյ  
պատմութիւն մ'է» կըսէ, մինչդեռ Քրիստոնէ-  
ական եկեղեցին՝ Աստուածաշունչի սոյն գրուած  
Քրիստոսէ առ իւր եկեղեցին ուղղեալ խորհր-  
դաւոր և նուիրական տրամախօսութիւն մը կըն-  
դուի, հետեալպէս Պ. Մամուրեանի «Երգ Եր-  
գոցը» հոլմախան սիրոյ պատմութիւն մը նկատելը  
ըստ մեզ բողոքովն անպատեհ է: (Երես 49) Պ.  
Մամուրեան՝ Արքաճամու իւր իսահակ որդին  
ոչվակիղերու համար տարած խրատ անունը  
(Գողգոթայ) կ'անուանէ: Ասիկա սխալ է. որով-  
հետև Ս. Գիրքը կըսէ «Արքաճամու գացած լեռան  
անունը չէր գիտէր, և երբ Աստուած հոն իրեն  
երեցաւ, անոր անունը «Եհովայիբէ» գրուաւ, որ  
կընշանակէ «Տէրը պիտի նախախնամէ՛ իմ պիտի  
տեսնէ»: Նոյն երկասիրութեան մէջ Պ. Մամուր-  
եան հայերէն լեզուին կանոնայ դէմ ալ կըմե-  
ղանչէ յայտնապէս, երբ կըն մասնիկին «ք»  
տառը կըջնջէ և «կ» տառին վրայ մակակետ մը  
դնելով կըգրէ: Բայերուն առջև դրուած «կը»  
մասնիկը՝ միայն «կ» տառին վրայ չկայանար, «ք»  
տառին ընկերակցութեամբ կըկազմուի: Վեր-  
ջին տառը այն ատեն կըկրճատուի երբ բային  
սկզբատառը ձայնաւոր ըլլայ, ինչպէս կ'«ք» լը-  
մէ. վասնզի լեզուն կըպահանջէ որ երկու ձայ-

ինքն հանդուցեալ Մարիամ տիկնոջ և նորա ա-  
մուսին Յովհաննու Ստեփանեան Յովնանեանց,  
որոյ անձամբ հանգ խիս ներկայ գտնուելն այն-  
քան ցանկալի էր մեզ ամենեցուն, և այս բացա-  
կայութեան պակասութիւնը կըցնեն ու կըմխի-  
թարեն զմեզ միայն նոյն բարերարին եղբայր-  
ներն, փեսաներն և միւս ազգականները:

«Քրիստոսասէր հանդիսականք, այժմ իսկ  
լսեցինք ուրբ Աւետարանին հիմնալի և սրտա-  
շարժ պատմութիւններէն մէկը, որ շատ կյար-  
մարի մեր այս հանդիսին: Հրէից ժողովուրդը,  
խեղճ աղքատ ժողովուրդ՝ տեսնելով մարդասէր  
Փրկչին մերոյ Աստուածային գթութեամբ և գո-  
րովանօք վարուիլը ամենուն հետ, և թէ ինչպէս  
շատ անգամ հիւանդաց վերայ ձեռք դնելով՝  
նոցա տկարութիւնները կըփարատէր, մէջերէն  
զաւակի տէր հայրերն ու մայրերը սաստիկ ե-  
ռանդով և հաւատով իրենց մանրիկ զաւակնե-  
րը Փրկչին ոտքը կուզէին ձգել որ ձեռք դնէ  
նոցտ վերայ և օրհնէ զնոսա. «Մատուցանէին  
առ նա մանկսի, զի ձեռն դիցէ ի վերայ նոցա»:  
Քրիստոսի աշակերտները իբրև իրենց երկնա-  
ւոր վարդապետին պատիւը չպահել և նորա  
անհանգստութիւն պատճառել համարելով այն  
խեղճերուն գործողութիւնը, չէին ուղեր թո՞-  
ղու որ վաղեն դհան տղայք Յիսուսի ոտքը  
«Եւ աշակերտքն սաստիկն նոցա որք մատուցա-  
նէին»: Իսկ Փրկչին մեր դարձաւ ասաց աշակեր-  
տաց. «Թոյլ առք մանկաւորք դալ առ իս, և  
մի արդեւուք զգոսա զի այդպիսեացք է արքա-  
յութիւն երկնից»: Գիրոցէք, ասաց, որ այդպի-

լով իրեն երկար և երջանկաւէտ կեանք և նորա  
բարեգործական Աստուածահաճոյ և ազգօգուտ  
հիմնարկութեանք յառաջադիմութիւն և յարա-  
տեւութիւն. կը յիշատակէր համառօտիւ նաեւ  
դպրոցին հիմնական կարգադրութիւնները, և  
կը յորդորէր խորհրդարանի անդամներն և  
դպրոցի տեսուչն և ուսուցիչներն այնպէս աշ-  
խատելու, որ այս բարեգործութեան պատճառ  
եղովները հասնին յաջողութեամբ իրենց գեղե-  
ցիկ նպատակին:

Կենդակին ընթերցմանէն յետոյ կատարեցաւ  
մտղթանք վասն Օգոստափառ կայսեր եւ Նորին  
Նայսերական բարձրութեան՝ Փոլսարքային կով-  
կասու: Իսկ յետ այնորիկ կուսանաց դասը ձայ-  
նակցութեամբ քահանայից կատարեց պաշտօն  
հանգստեան հոգւոյ բարեյիշատակ ամուսնոյն  
Յովհաննու Յովնանեանց:

Այս հանդէսներէն վերջը բոլոր եկեղեցականք,  
ընդ որս նաև զգետաւորեալ կուսանք՝ որ կեր-  
գէին «Յաւուրս վերջին ժամանակի», շարականը  
եղան սուրբ Եկեղեցիէն իջան թափօրապէս դէպ-  
ի Ռ. սուսնարանը, և ներս մտած ժամանակները  
երգեցին սրբոց թարգմանչաց մերոց շարականը  
«Որք զարդարեցին»:

«Ուսումնարանին շինուածքը, զոր Բարերա-  
րը դնած է ի Բեհրուտեանց իշխանաց և վայել-  
չապէս նորոգած է՝ ծախսելով աւելի քան յի-  
սուս հազար ռուբլի, ընդարձակ և պայծառ շի-  
նութիւն է կրկնայարկ՝ հանդերձ մեծ և փոքր  
պարսպապատ բակերով կամ սրահներով, որմնա-  
կից Անպատին կուսանաց»:

կրկնուժը կրճատուի հնչումը քաղցրա-  
համար : Պ. Մամուրեան որ աշխարհիկ  
լեզուի լեզուի գլխաւոր դասատու է , երկու  
աշխարհային մէջ մակակէտ մը կը դնէ (կ'գրէ՞) և  
լեզուի թէ ինչ ըսել կուզէ : Իսկ եթէ պատ-  
կան այնպէս կը կարծէ որ մասնիկը միայն «կ»  
առան է առանց «ը» ի , ուրեմն ինչ կարեւորու-  
թիւն կը տեսնէ «կ» ին առջև մակակէտ նշանը  
կը լինի : Ասիկա յիշեալ մտնումը աշխարհա-  
տեսան պատուելիին , հայերէն լեզուին մէջ  
պարզաձ անտեղի նորաձեւութեանց մէկն է :  
Սակայն ցաւալին այն է որ իր հակողութեան  
ընդդէմ դաստիարակութիւնը յիշատակ հայերէն  
լեզուն իր պահանջած անժխտելի կանոնաց հա-  
ձայն ուսանելու , Պ. Մամուրեանի քմաց և  
պակկին համեմատ սովորելու պիտի ստիպուին ,  
այս ընթացքով աւարելի ու անիմանալի վի-  
ճակ մը պիտի ենթարկին :

Մնամ և այլն

Յ. ԲԱՅԷԼԷԱՆ

Երկրորդ ամին Արշալուսոյ Նոյ 26 թուոյն  
վճեաւեալ յօդուածն հրատարակելու եմք :  
Վաղաքի Ս. Մարտիան և Հովհաննիսեանց  
վարժարանաց քերականութեան դաս-  
տուութենէ օրինակ մի յառաջ կը բերեմք ,  
որով խոհական ընթերցողն կրնայ իմաստասի-  
ր հայերէն լեզուին ուսման կերպն երկուց  
այլ յատկացեալ յիշեալ վարժարանաց մէջ :

- Եղակի ,
- Ուղղական հայր
- Սերական հայրի
- Ստական հայրի
- Սոցական հայր :
- Եղակի ,
- Ուղղական որդի
- Սերական որդի
- Ստական որդի
- Սոցական որդի :
- Եղակի ,
- Ուղղական հոգի
- Սերական հոգի
- Ստական հոգի
- Սոցական հոգի :

Այս ամենաձայնորդ գրութեամբ , (որոյ դէմ  
որոշեմք մեր ամենայն զօրութեամբ) մեր  
թէն կանոնաւոր լեզուն խանգարուելէ ՚ի

անհղին ունին իրաւունք վայելելու յեր-  
արքայութեան փառքը , և յերկրի իմ ե-  
րկուց (որ նոյնպէս արքայութիւն երկնից  
թիւ) արժանաւոր ժողովուրդ լինելու շնորհ-  
քով մեծարգոյ հանդիսականք , շատ նման  
նման սոսր Տիկիստու չքաւոր ժողովուրդոց  
նման այրիներու եռանդը , որով հարկւրա-  
ր իրենց մատաղբրած զաւակունք բերին և  
նոյա ծարաւը յազեցնելու այս ճշմա-  
տաստաւորաշտութեան և իմաստութեան  
աղբիւրէն , զոր Յովնանեանց առատա-  
ւորութիւնը բացաւ նոյա առաջը : Կար ժա-  
պատուական հանդիսականք , յորում  
այն մայրեր , այլև հայրերը կարգելին ի-  
զաւակաց մանանանդ աղջկանց ուսում  
դիմել , սակայն թէ թող իմ զաւակս  
դիմաստուն չլինի , և թէ կարգալ գրելը  
աղայոց հարկաւոր բան չէ . տեսէք այժմ  
մեծ և ուրախալի փոփոխութիւն կայ  
մասին յազգիս մերում , մանաւանդ Տի-  
կիստու մէջ , որ ոչ թէ երկու կամ երեք , այլև  
մեծ թիւ և աւելի օրիորդական դպրոց-  
անկանայինք , դարձեալ սակաւ պիտի լի-  
նորա ուսման կարօտ օրիորդաց բազմու-  
թեամբ նայելով : Մինչև ցայժմ ունեւինք միայն  
անկան և Մարիամեան օրիորդական դպ-  
րոց , և այլ ևս քանի մը մասնաւոր դպրոց-  
ոց ամենեցուն բարեկարգ յառաջողի-  
նէր որքան և գովմք սակաւ է . այսօր  
այն ահաւասիկ նաև Մարիամեան Յովնանե-  
անց օրոյ ընդարձակութիւնը շատ հա-

ղատ , վերոյիշեալ ազգային վարժարանաց աշա-  
կերտ կամ աշակերտուհի մի երբ «Յանուն Հօր և  
Որդւոյ և Հոգւոյն սրբոյ» սակայն խաչակնքէ ,  
անշուշտ պիտի չկրնայ իմանալ Հօր , Որդւոյ և  
Հոգւոյն սրբոյ բառից նշանակութիւնը :

Այս նորահնար ցաւալի դրութիւնը ո՞ր կը-  
տանի արդեօք զսերելի զաւակունս մեր : Խոհա-  
կան ծնողաց սրբազան և անհրաժեշտ պարտա-  
ւորութիւնն է հարցանել քաղաքիս ազգային  
Ուսումնական Խորհրդոյն և պահանջել զանմի-  
ջական բարեկարգութիւնն այս ձայնորդ և ազ-  
գապնաս դասատուութեան աղերսագիր մի մա-  
տուցանելով վիճակիս ազգային երեսփոխանա-  
կան ժողովոյն :

Գիտեմք հաւաստեալ թէ պատասխան պիտի  
ընդունին որ թէ և Հովհաննիսեան դպրոցին մէջ  
գրաբար դասատուութիւնն բոլորովին բարձ-  
եալ է , սակայն Մարտիան վարժարանին մէջ  
կայ : Բայց յարգոյ հասարակութիւնն և ծնողք  
պարտին գիտել թէ այս դասատուութիւնն ան-  
ուամբ միայն կայ և ոչ իրօք . բայտ որում 500ի  
չափ աշակերտներէն միայն 7-8 պատանեաց  
գրաբար ուսումն կաւանդուի , թէ և հայկա-  
բանութեան քաջ դասատու մի ունիմք :

Այս ձայնորդ ընթացքն բնական է այնպիսի  
Ուսումնական Խորհրդոյ համար , որ զգրաբար  
լեզու մեր՝ մեռեալ և դիակ կը համարի և կը-  
քարոզէ որոց լսել կամին :

Կեդրոնական Ուսումնական Խորհրդոյն և ա-  
մենապատիւ տէր Ներսէս Ս. Պատրիարք Հօր  
մերոյ զմանր ուշադրութիւնն հրաւիրելով իրաց  
այս ազգապնաս և ամենաջաւալի վիճակին վե-  
րայ , մեր ազգասիրական պարտքն կատարած  
կը համարեմք :

Դարձեալ Արշալուսոյ Գեղտեմբեր 24 թուոյն  
մէջ վճեաւեալ տեղեկութիւնն հաղորդեալ  
եմք մեր յարգոյ ընթերցողաց :

«Յանցելում շարաթու աղերսագիր մի մատու-  
ցաւ վիճակիս ազգային ֆաղաքական ժողովոյն»  
խնդրելով որ քաղաքիս ազգային վարժարանաց  
մէջէն վերնայ աշխարհաբար քերականութեան  
նորելուկ ձայնորդ դասատուութիւնն , և նորա  
յաջորդէ մեր գրաբար համառօտ և պարզ քե-  
րականութեան օրինաւոր դասատուութիւնն ՚ի  
կանոնաւոր յառաջադիմութիւն աշակերտաց և  
աշակերտուհեաց : Քանզի կը լինի թէ իւրա-  
քանչիւր դասատու՝ ըստ իւր քմաց , աշխարհիկ  
բարբառոյն իբր թէ քերականութիւն յորինե-  
լով դաս կուտայ . որով աշակերտաց թանկագին

ւանական է որ կարճ ժամանակի մէջ նեղ և ան-  
ձուկ լինի՝ այստեղ քալու ցանկացող աշակեր-  
տուհեաց համար :

«Այսու յուսով և բերկրալից սրտիւ կը նորհա-  
ւորեմ Յովնանեան ազգատուհիս ներկայ և բա-  
ցակայ աղնուամեծար անդամոց՝ իրենց ճշմա-  
րիտ պարծանք լինելու դպրոցին բացումը , մաղ-  
թելով սմին արագ արագ յառաջադիմութիւն  
և անսոյթաբար յարատեւութիւն :

«Ուրախակից եմ նաև մեր համեստակրօն  
ճգնասուն կուսանաց միաբանութեանը , որոց  
ազգօրուտ գործունէութեան առաջը կը բացուի  
այս դպրոցս իբրև նոր ասպարէզ Աստուածահա-  
ճոյ և մարդասիրական ամենազովիլի ճգնու-  
թեան և առաքինութեան : Թող այս առաքի-  
նասէր կուսանք այժմէն միմի արուին աներկբայ  
յուսով թէ նոյա վարձքը մեծ պիտի լինի ա-  
ռաջի պարզեւատուին ամենայն բարեաց նաև  
ասով՝ որ հոգեւոր մայր և ծնող և դաստիարակ  
պիտի լինին բազմաթիւ բարեպաշտ մայրերու և  
սերնդոց նոյա : Այս աներկբայ յոյսը , այս հո-  
գեւոր ծնողաց առաքինութիւնը միշտ պէտք է  
մեր միաքը ձգէ երանելի կոմիտաս կաթողիկո-  
սին սրբոց Հովհաննիսեանց համար երգած ճշմա-  
րիտ և գեղեցիկ խօսքը , թէ «Ծնան կուսանք  
ազգս բազում , և մարք մանկունք զճարպարա-  
կըս ծերոց . ի գիրկս սրբութեան ալօթից և պա-  
հոց աճեցին հաւատով զարգացեալք ի ֆրիստուս  
Նորին ֆրիստուսի Տեառն մերոյ օրհնութեան  
շնորհիւր աճին հաւատով և զարգանան իմաս-  
տութեամբ այս նորահաստատ դպրոցիս աշա-

ժամանակին կորստեան պատճառ կը լինի . մինչ-  
դեռ գրաբար համառօտ քերականութեան  
դասատուութեամբ , ինչպէս որ տեղի ունի  
յազգային վարժարանս կ. Պօլսոյ և այլ գլխաւոր  
քաղաքաց , աշակերտք զպարզ գրաբար ու-  
սանելով , որ հիմն է աշխարհիկ բարբառոյն ,  
միանգամայն և զաշխարհաբար կուսանին ա-  
ռանց դասատուութեան :

«Մեր արժանայարգ ազգային ֆաղաքական  
ժողովոյն ծանր ուշադրութիւնը կը հրաւիրեմք  
վերոյիշեալ աղերսագրոյն վերայ . որոյ մէջ բաց  
ի ծնողաց աշակերտաց և աշակերտուհեաց ,  
դտանին նաև փորձառու ուսումնական անձանց  
և ուսումնասիրաց ստորագրութիւնքն» :

Մինչև ցայսօր արդիւնք մի չտեսնուելով ՚ի  
վերոյիշեալ ազգասիրական յօդուածոց , հարկ  
համարեցաք կրկնել զայնուսիկ մեր ներկայ թը-  
ւոյն մէջ աղաչելով դարձեալ զմեծարգոյ ազ-  
գային քաղաքական ժողովս վիճակիս որպէսզի  
զմանր ուշադրութիւն իւր դարձնէ ՚ի վերայ  
այս կենսական խնդրոյն , և բարեհաճի մասնա-  
ժողով մի կազմել տալ ՚ի գրաբարագէտ ու-  
սումնականաց և յայլոց ձեռնահաս անձանց սու-  
ի կարող լինել հիմնական տեղեկութիւններ  
ձեռք բերել , և վերահաստատել քաղաքիս  
ազգային վարժարանաց մէջ զկանոնաւոր դա-  
սատուութիւնն համառօտ և պարզ գրաբար  
քերականութեան , որ հիմն է՝ մեր աշխարհիկ  
գաւառական զանազան բարբառոց :

Այս ծանր խնդրոյն վերայ ազգասիրական  
թախանձանք հրաւիրեմք նաև զուշադրութիւն  
Կեդրոնական մեծայարգ Ուսումնական Խորհր-  
դոյն և նորահաստատ Հայկաղեան կաճառին կ.  
Պօլսոյ . որպէսզի ՚ի նկատի առնելով զառաջադ-  
րութիւնն ուսումնասիր և ազգասէր մասին հա-  
սարակութեան քաղաքիս , դասաքննութեան  
ներքև դնեն զայն և զարգիւնս դասաքննու-  
թեան իւրեանց փութան հաղորդել ազգային  
Պատրիարքարանի կ. Պօլսոյ , որ անշուշտ հոգ-  
պիտի տանի հարկաւոր եղած հրահանգներն յու-  
ղարկել աստ առ որ անին է , ՚ի բարեկարգու-  
թիւն և ՚ի կանոնաւոր դասատուութիւն ազգ-  
ային լեզուի մերոյ :

Ի նամակէ Հայ ուսումնական երիտասարդի միայն  
ի Լոնտօն բնակելոյ , զհետեւեալ քաղեմք .

«Արշալուսոյ 1080 թուոյն մէջ՝ ձեր փոքրիկ  
յօդուածը կարգացի ընդդէմ նոր քերական-  
ական դրութեան Զվուռնոյ ազգային դպրա-

կերտուհիները ի փառս Աստուծոյ և ի պայծա-  
ռութիւն ազգիս Հայոց . ամէն» :

Այնուհետև մատեան համբուրել սուրբ խաչը  
բարերար հիմնադրաց մեծա . ազգականները , և  
դպրոցին տեսուչ մեծարգոյ Պ. Յովնանէս Զի-  
կիսեանցը կարգաց իւր ճառք , յորում գլխա-  
ւորապէս կը բացատրէր օրիորդական ուսումնա-  
րանաց և իգական սեռի դաստիարակութեան  
անհրաժեշտ կարեւորութիւնը , մանաւանդ մեր  
աղբին համար . և ի վերջ ճառին ծանոյց հան-  
դիսականաց թէ այժմէն ընդունուած աշակեր-  
տուհեաց թիւն է այս :

Յովնանեան սանք . . . . . 60  
Որդեգիրք բարերարաց . . . . . 20  
Թոշակաւորք . . . . . 30

Յետ այս ամենայնի աշակերտուհիք միառմի  
մատուցեալ ընդունեցան սրբազան Առաջնորդին  
օրհնութիւնը , և այնպէս աւարտեցաւ այս ազ-  
գային հանդէսը : Հանդիսականք սկսան զնեղ  
այն դեղեցիկ և մեծամեծ աշխարհացոյցները ,  
սուրբ դրոց պատմութեան գեղանկար և թան-  
կագին պատկերները , և բնական պատմութեան  
զանազան մասանց զարմանալի ճշդութեամբ  
նկարուած պատկերները , որովք զարգացուած  
էին դպրոցին սրահներն և դասարանները՝ նորա-  
նոր առատաձեւութեամբք բարերար Հիմնա-  
դրին : Յետոյ բոլոր հանդիսականք և աշակեր-  
տուհիք յարգուեցան շայով և խահուէիւ , և  
արձակեցան ուրախութեամբ փառք սարով Աս-  
տուծոյ և օրհնաբանելով բնական Յովնանեան  
ազգատուհիք :

